Հայ գրականություն - Մարզային փուլ

9-րդ դասարան

Հարցաշարի պատասխաններ

1. Դպրության աստվածը հայոց դիցարանում Տիրն է:

- 405թ. Հայաստանում կատարված պատմական հեղաշրջումը հայոց գրերի գյուտն էր:
- Հեղինակը հայերենի առաջին ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցն էր:
- Այդ անբստգյուտ հայտնության մասին ստույգ պատմությունը մեզ է հասել Մ. Մաշտոցի աշակերտ Կորյունի «Վարք Մաշտոցի» մատյանի միջոցով:
- Կորյունին մեծարել են Կորյուն երանելի , Կորյուն սքանչելի, Կորյուն հանճարաբան պատվանուններով:

2. Հեթանոս հայի պատկերացմամբ ամպրոպի ծնունդն ուղեկցվել է ողջ բնության՝երկնքի, երկրի, ծովի և կարմիր եղեգնիկի երկունքով, որից ծնվում է ամպրոպի աստվածը՝հուրհեր, բացամորուս և արեգաչք:

- Երկնէր երկին,

Երկնէր երկիր,

Երկնէր եւ ծովն ծիրանի,

Երկն ի ծովուն ունէր եւ զկարմրիկն եղեգնիկ:

Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,

Ընդ եղեգան փող բոց ելանէր,

Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.

Նա հուր հեր ունէր,

Բոց ունէր մօրուս,

Եւ աչկունքն էին արեգակունք:

- Ներքին հանգերն ու հնչյունների այսպիսի կրկնությունը կոչվում է հանգիտություն. Երկնէր երկին երկինք, ծով ծիրանի, կարմրիկ եղեգնիկ, հուր հեր, աչկունք արեգակունք:

3. Մեր ժողովրդի դյուցազներգությունը «Սասնա ծռերն» է: Այն ձևավորվել է 8-10-րդ դարերում՝ներառելով վաղնջական ժամանակները: Առաջին հիշատակողներն են պորտուգա-լացի ճանապարհորդներ Անտոնիո Տենրեյրոն և Մեստրե Աֆոնսոն/16-րդ դար/:

- Էպոսի ճյուղերը սկսվում են նախերգական հատ¬ված¬նե-րով՝«օղորմիների» շարքով: Ժողովուրդը միշտ էլ օրհնությամբ է հիշատակում ազնիվ, բարի, ստեղծագործ մարդկանց ու նրանց գործերը՝ դրանով էլ արտահայտելով իր սերն ու երախտագիտությունը:
- Աշխարհագրական տեղանուններն են՝Սասուն, Կապուտկող, Կաթնաղբյուր, Պղնձե քաղաք,Մարութա սար, Բաղդադ, Վան, Վանա քար, Ագռավու քար, Սուրբ Կարապետ վանք, Մատնավանք, Կանաչ քաղաք, Գյուրջիստան, Նեմրութա սար, Մարութա Աստվածածին վանք, Հալեպ, Անգղա ձոր, Բիթլիս քաղաք, Ախմախու սար, Բաթմանա գետ և կամուրջ, Ծովասար, Մանաձկերտու բերդ և այլն:

4. Օսկե փնջան, զարբաբ վրան, սուլթան ու խան, ռաշ ու ջեյրան, հիլ, մեխակ, դարչին, վարթ, մանիշակ, սուսանբար, շուշան, դաշտի ծաղիկ:

5.Մտքի հեղինակը հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանն է: Այս մտքի հաստատումը եղավ «Վերք Հայաստանի» վեպը: Հայրենիքի համար մեռնել նշանակում է մասնակցել հայ-րենաշինությանը,նպաստել հայրենի երկրի խաղաղությանն ու բարեկեցությանը:

10-րդ դասարան

Հարցաշարի պատասխաններ

1. Վիպերգը ժողովրդի պատմությունից վերցված իրական հիմքով ավանդություն է, իսկ առասպելները զրույցներ են բնության ուժերը մարմնավորող աստվածների մասին:

- Ե՛վ աստված, և՛ թագավոր է «Արա Գեղեցիկ և Շամիրամ» վիպերգի հերոս Արա Գեղեցիկը՝ Արամ թագավորի որդին, որին ժողովուրդը նույնացնում էր մեռնող և հառնող բնության աստծո հետ:
- Արա Գեղեցիկը զոհվեց իր հայրենիքի ազատության համար՝որպես հասարակ զինվոր:
- Նրա կերպարին անդրադարձել են Վահան Տերյանը՝

«Չեմ դավաճանի իմ Նվարդին», Եղիշե Չարենցը՝ «Շամիրամ», Նաիրի Զարյանը՝ «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը, Կոստան Զարյանը՝ «Արա աստված» պոեմը, նկարիչ Վարդգես Սուրենյանցը՝«Շամիրամը Արայի դիակի մոտ» գեղանկարը:

2.Դիմառնության գրական հնարանքով առաջինը ստեղծագործել է Ներսես Շնորհալին «Ողբ Եդեսիոյ» պոեմում:

- Դիմառնությունը անշունչ առարկաներին շնչավորելով խոսելու, մտածելու, զգալու կարողությամբ օժտելն է:
- Հետագայում Ռ. Պատկանյանը գրեց «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունը:

3. Այդ բանաստեղծը 16-րդ դարի հանճարեղ երգիչ Նահապետ Քուչակն է: Նա իր սիրո հայրեններում գովերգել է կնոջ արտաքին գեղեցկությունը՝ համարձակորեն նշելով մարմնական բարեմասնությունները: Գրել է հայրեններ:

- Հայրենը տասնհինգվանկանի 7/8 բաժանումով քառատող է:
- Ընդունելի է ճիշտ ընտրված ցանկացած հայրեն:

4. Կամիշինի վսեմական աքսորականը Միքայել Նալբանդյանն է:

- Նրա կերպարին անդրադարձել են Ռաֆֆին «Խենթը» /Համրի կերպար/, Պետրոս Դուրյանը «Տարագիր ի Սիպերիա», Եղիշե Չարենցը «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում», Սեդրակ Տեր – Սարգսենցը «Շահենն ի Սիպիր» ստեղծագործություններում:
- Միքայել Նալբանդյանը հանդես է եկել Կոմս Էմմանուել կեղծանունով:

5. Վաղամեռիկ հանճար Պետրոս Դուրյանն է այս խոստովանության հեղինակը: Նրա վերջին բաղձանքն էր. «Կուզեմ, որ իմ վերջին շունչն ալ երգ մթըլլա»:

11-րդ դասարան

Հարցաշարի պատասխաններ

1. Խոսքի Ռոբեսպիեր կամ հայոց Մոլիեր անվանել են Հակոբ Պարոնյանին:

Գրական մարդիկ ծաղրվում են ‹‹Մեծապատիվ մուրացկաններ›› մենագրական վեպում:

Այս մոտեցումը, իհարկե, արդիական է, քանի որ այսօր ևս գրչի մարդիկ ապրում են շատ դժվար, կարդալն իր տեղը զիջել է համացանցին ու բազում կայքերին, որոնք ոչնչով չեն նպաստում մարդու հոգեկերտվածքին:

2. Երջանիկ մահը, ըստ Գրիգոր Զոհրապի, կյանքը սիրած մարդու գրկում ավարտելն է: «Երջանիկ մահը» նորավեպի հերոսուհին անանուն է. այս խոսքերը նա ասում է բժիշկ Վահանյանին:

3. Հայ ժողովրդի անցած ճանապարհը Թումանյանը խտացնում է «Հայոց լեռներում» բանաստեղծության մեջ: Այստեղ խտացված են մեր ժողովրդի պատմական ճակատագիրը, պայքարը և լուսավոր գալիքի հավատը:

Մեծ լոռեցին հայոց վիշտը համեմատում է անհուն ու խավար ծովի հետ, որտեղ տառապելով լող է տալիս բանաստեղծի հոգին: «Հայոց վիշտը» բանաստեղծությունն է այդ վշտի խտացումը:

Քառյակը քառատող ավարտուն ստեղծագործություն է՝ գերազանցապես խոհափիլիսոփայական բնույթի:

Թումանյանն ասել է. «Քառյակները շատ ուժեղ շտրիխներ են, դրանք իմ հոգու կենսագրությունն են»:

4. Հայոց երգի նահապետին Եղիշե Չարենցը մեծարել է Վարպետ պատվանունով:

«Լիլիթ» լեգենդը ստեղծվել է 1921 թ.-ին հրեական առասպելի հիման վրա : Լիլիթը ստեղծվել էր կրակի բոցերից, իսկ Ադամը՝ կավից:

Լիլիթն Ադամից միշտ կավի հոտ էր առնում. նրան չէին զոհացնում դրախտի հրաշալիքները, Ադամի անմնացորդ նվիրումը: Նրան ձգում են անիմանալին, խորհրդավորը, օձն ու սատանան: Եվ նա, օձի պարանոցից կախված, սուզվում է անհունում: Ըստ Լիլիթի՝ դրախտի ամենահամեղ պտուղը համբույրն է: Լիլիթը հավերժական առեղծվածի մարմնացումն է:

Սիրո հավերժության գաղափարը Իսահակյանը ներկայացնում է «Ասպետի սերը» և «Հավերժական սերը» բալլադներում:

5. Վերոգրյալ մտքի հեղինակը Դանիել Վարուժանն է՝ գրական ֆիդային: Խոսքը «Հացին երգը» ժողովածուի մասին է, որը լույս տեսավ հեղինակի նահատակությունից հետո՝1921թ.: Կառուցվածքով այն հիշեցնում է պոեմ:

«Հունձք կը ժողվեմ» բանաստեղծությունն է, որտեղ մշակը թախծում է իր սիրո մասին. «Մանգաղս քարին առավ, յարս յար ունի»:

6. Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայում խորհրդանիշների առատությունը բացահայտում է դրամայի ողջ ուղղվածությունը:

Հին աստվածներ- խորհրդանշում են նախաստեղծ ազատությունն ու վայելքները:

Ծով- կյանք, դրսի աշխարհ, կյանքի բուռն ծով

Քողավոր- Ծովիկ- ունայնության փոսը լցնող երազներ

Ճերմակավոր-Վանահոր ներքին ձայնը, անցյալը, որը հնչեցնում է աշխարհի ու կյանքի ձայնը:

Ալենուշներ, Միգանուշներ, Հովիկներ- կյանքի գեղեկությունը, դրսի աշխարհի հզորությունը:Ճգնավոր- հոգու աչքը, ներքին զգայությունը:Նույն առեղծվածի առաջ կանգնած են Վանահայրն ու Աբեղան. երկուսն էլ իրավացի են ու պարտված:

12-րդ դասարան

Հարցաշարի պատասխաններ

1. Եղիշե Չարենցը «Դանթեական առասպել»/ 1916թ., Թիֆլիս/ և Հովհաննես Շիրազը «Հայոց դանթեականը»/ 1965 թ. Բեյրութ/:

Երկու պոեմներն էլ ներկայացնում են 1915թ.-ի ցեղասպանությունը:

Որոնման ճանապարհին կապուտաչյա հայրենիքի առասպելն է ցնդում Չարենցի երկում, իսկ Շիրազը անդրադառնում է թուրք մարդասպանի՝ դարերով թրծված կերպարին և հայերի չմեռնող հավատին:

2. Ծմակուտի քուրմը Հրանտ Մաթևոսյանն է: Նրա գրական ուսուցիչները եղել են Ակսել Բակունցը և Հակոբ Մնձուրին: Մաթևոսյանի «Ալխո» և Բակունցի «Սպիտակ ձին»: Մարդու և կենդանու դաշինքը, իհարկե, նրանց ստեղծագործություն-ներում տարբեր վերջաբաններ ունեն:

Հակադրվում են «Աշնան արևը» և «Ալպիական մանուշակը». Աղունը՝ մարտնչող, իսկ լեռնուհին՝ հնազանդվող:

3. «Զորի Միրոն» վիպակի գլխավոր հերոս ֆիդայի Միրոն ընդհանրացնում է տասնյակ հազարավոր զաղթական, հայրենազուրկ արևմտահայերի ճակատագիրը: Այն էկրանավորել է տաղանդավոր բեմադրիչ Ժ. Ավետիսյանը: 1979-1980 թթ.: Գլխավոր դերակատարը ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանն է:

4. Այս խոսքերը Վիլյամ Սարոյանինն են «Հայը և հայը» պատմվածքից: Նա հաստատում է հայրենիքով ապրելու , իր դարավոր արմատներով հայ մնալու, հայրենիք ու հայրենի բարբառ չմոռանալու ուժը, իրենք իրենց ճանաչող հայերի ապրելու կամքը: «Նռնենիներ», «Իմ անունը Արամ է», «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը», «Հայրիկ, դու խենթ ես» և այլն:

5. «Մարդը ափի մեջ» ժողովածուի հեղինակը Պարույր Սևակն է: Ժողովածուն լույս է տեսել 1961թ.: Ժողովածուի գաղափարը մարդու ինքնաճանաչման և մարդ ու դարաշրջան հարաբերություններն են: Մարդը դիտվում է բոլոր հնարավոր վիճակների և գործողությունների մեջ՝ բացահայտելով իր ինքնությունը: Այն մարդուն է փառաբանում, որը կատարելության ձգտումով իրեն հավասար է դարձնում իր ստեղծած աստծուն:

6. Իսահակյանի Կտակը

Սիրու՛ն մանկիկ, ես գնում եմ, դու գալիս ես այս աշխարհ,

Խաղերով լի այս աշխարհում խաղդ եթե տանուլ տաս,

Զվա՛րթ եղիր ու այդպիսով բախտիդ վրա կխնդաս:

Շիրազ- Քեզ Մասիսն եմ կտակում, որ դու պահես հավիտյան,

Որպես լեզուն մեր հայոց, որպես սյունը քո հոր տան:

7. Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակից են վերոնշյալ տողերը: Բնութագրում են Մահարու առաջին աքսորի տարիները/1937-1947թթ./:

Դա և՛ իր, և՛ տասնյակ միլիոնավոր աքսորականների կյանքի պատմությունն է անհատի պաշտամունքի տարիներին:

Եղիշե Չարենց, Ակսել Բակունց, Վահան Թոթովենց և այլք:

Հանձնաժողովի նախագահ՝Ս.Աբազյան